ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 26 >> նոյեմբերի 2012թ № 168 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԳՈՐԻՍԻ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ՍԻՍԻԱՆԻ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ՄԵՂՐՈՒ N1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ԵՎ <<ՏԵՂԻ N2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի ա) ենթակետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի << Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գումար հատկացնելու մասին>> N 1368-Ն որոշման, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. 2012 թվականին հանրակրթական դպրոցներում կրթական ծրագրերի իրականացման գծով պարտքեր չառաջացնելու հանգամանքով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին ՀՀ Սյունիքի մարզպետարանին հատկացված 8388.7 հազ. դրամ գումարը հատկացնել պետական ոչ առևտրային կազմակերպություններին՝ համաձայն հավելվածի:

2. Կազմակերպությունների հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել դրամաշնորհի հատկացման պայմանագրեր:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. նոյեմբերի 26
ք. Կապան

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզպետի 2012թվականի
նոյեմբերի 26-ի N168-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին հատկացումների վերծանումը՝ ըստ կազմակերպությունների և բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների

NN ը/կ	Կազմակերպությունների անվանումները	Հատկացվող գումարը հազ. դրամ	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը
	ԸՆԴԱՄԵՆԸ	8388.7	
	այդ թվում		
1	<<Գորիսի N2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ	1900.0	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին
2	<<Մեղրու N1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	2000.0	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին
3	<<Սիսիանի N2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ	2488.7	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին
4	<<Տեղի N2 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	2000.0	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին

Աշխատակազմի ղեկավար՝ Ռ. Ղազարյան